

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ֆարմանի Ասմանի

Հ Ր ԱՅՏ Ա Ր Ա Կ Ե Յ

Ձրհեհրիք Մ Ա Ք Լ Է Ր

(Շար. եւ վերջ)

Ընթերնուն(1) գրուողն Ֆարման մանուկն եւ գրե պատասխանի այսպես :

Հոգիս յօժար կամօք է խնդիր ելել ,
Եւ սիրտս այն կ'ուզէ որ աչքս է տեսել .
Ջերթ ծարաւած ծաղիկ ցողիդ մընացել ,
Որ ինձ ի քո տեսուդ հոգիս աւելցել :

Ես այլ ո՛ւստից ունիմ ա՛հ եւ կամ երկեղ
Կամ թէ քաղաք ունիմ կամ երկիր եւ գնդ .
Եկեալ եմ բնակել ի քար 'ւ ի դժմար տեղ .
Ղարիպ եմ եւ արքաու՛մ, զքեզ ինձ ուզեմ զեղ :

Թէ դու սրտովդ յօժար ես մօտ առ իս գալ ,
Նայ իմ հոգուս կա՛մ է մէջ սըրտիս տեղ տալ .
Իմ սէրըս քո սիրուդ սըրտին է հալալ ,
Ջէրա ի քո սըրտէք սէր ինձ կամիս տալ :

Առ իս կայ ամէն իրք , իսկի պակաս չէ .
Եւ տեղս է խիտ ամբողջ որ մարդ եկել չէ ,
Թէ կամիս գալ առ իս, (fol. 70.) չստես հա՛ եւ չէ՛ ,
Մանուկդ Փայիփառ զքեզ առ իս բերէ :

Երբայ մօտ առ Ֆարմանն դուստր քազաւորին ,
գոր երեք Փայիփառ մանուկն առ նա :

Դառնայ մանուկն եւ գայ ի քաղաք մըտնու ,
Եւ գաղտ ի պիչերի ըզնա ինք գործու ,
Ասէ՛ Հոս կայ եկի , չուտով պահաւուն տու ,
Կամի՛ս երթալ , ունի՛ս մուրառ զընալու :

Թսէ՛ Ես եմ գալու , դու թըտպիր արա ,

(1) Ձեռ. մէջ՝ ընթերնուն :

Թէ ո՛նց եղնենք աստից որ մարդ չիմանայ
Ասէ՛ Կամի՛մ տանել հետ ինծի ծառայ ,
Որ է ինձ սիրական 'ւ ընկեր լինենայ :

Առել զերկուսն եւ ի քաղքէն հանել է ,
Հանցեղ որ յաշխարհէն մարդ իմացել չէ .
Եւ ի մէջ գիշերի զմօրին անցել է .
Գնացել մօտ առ Փարման ըզնա տարել է :

Տեսնու Ֆարմանն ըզնա , ասէ թէ՛ Երնէ՛կ ,
Հոգուս հոգին 'ւ աչքուս լուսն ինձ երեկ ,
Արեգակըն սուրաթ գիշեր եւ ցորեկ ,
Համբուրեց եւ ստաց՝ Աչքուս երնէ՛կ :

Կենան ուրախութեամբ ի մէկտեղ հաւար ,
Ամէն ցեղ բարութիւն (fol 70v.) հոն անպակաս
կար ,
Եւ Փայիփառ մանուկըն զամէնն արար .
Ջոր աշխարհէն բերէր եւ զօրն գայր որսայր :

Ելանէլ քազաւորին այն եւ զօրօքն խնդրէլ
զդուստն իւր եւ ոչ եղիս :

Երթան վաղիւն ի թագաւորն եւ ասեն ,
Թէ՛ Ջրուստընն քո տարան հանց որ տեսել չին ,
Ջինչ ծառայ կար ի մօտն ամէնն ի տեղէ են .
Բայց ինքն եւ մէկ ծառայն մէն զընացել են :

Հարցաւ թէ՛ Առ նա ո՛վ եկել է իսկի .
Ասցին՝ Կըտրե՛մ մ'երեկ ի կերպ աղքատի .
Ասաց՝ Ո՛ւտտի էր նա եւ կամ ո՛վ լինի .
Ասցին՝ Ղարիպ էր նա որ ոչ ճանաչի :

Ասէ թէ՛ Ֆարմանին ընկերքն են յայտնի ,
Որ ունէին հետ մեղ շատ քէն ի սըրտի .
Թէ գտնու՛մ ըզնոսա յերկրի կենդանի ,
Մատնեմ ի մեծ տանջանս 'ւ ի սուր սուսերի :

Համբաւ ելաւ յաշխարհն եւ ծանրը հրաման .
Հեծուց անթիւ հեծել զինչ որ հետ իւր կան .
Հեծաւ թագաւորն այլ մեծամեծօքն այն .
Բըռնեց իւր աշխարհին ճանփան եւ զկապան :

(fol. 71) Մըրտին անթիւ հեծել ի դաշտ 'ւ ի մօյ-
տան ,
Ոչ մարդ կարնան գըտնուն եւ ոչ խապար տան ,

Ոչ բերդ թողին անտես եւ ոչ անգաստան ,
Ոչ գեղ եւ ոչ քաղաք եւ լեռան ու սահրան :

Ոչ գտաւ զնոսա մարդ , ոչ անուն որովին .
Ոչ ոք կարաց զիտնալ թէ՛ ո՛ւր զընացին .
Դառնայ մեծ թաղաւորն արքաութիւնի սրբոյն ,
Վառէր հուր մարմինոյն վանն իւր զաւակին :

Վասն Փայտիստ մանկանն քե ռոյգես զնոյր
գտեղին(1) այն ամենայն բարութեամբ եւ իր
պախա չառեկ աւենեւին :

Մանուկն Փայտիստ յորս ելնէր ճարտար ,
Բերէր զեղունք լեռանց եւ զվայրի ոչխար ,
Երթայր զէմ յանդիման քաղքին դադաւար ,
Զինչ իրք որ տեսանէր առնոյր եւ դառնայր :

Մըտնայր գաղտ ի քաղաքն որ մարդ չիմանայր ,
Առնոյր սըլե՛զ զընե՛զ զինչ որ պիտեանայր ,
Կուսեց քաղաւմ ոսկի շատ ակն եւ գոհար ,
Ըզգեստ զինչ պատուական թաղաւորի կայր :

Սըլե՛զ մօտ առ իրենք ճանց աննման կար ,
Որ թաղաւոր (fol. 71v) չունէր 'ւ ոչ յաղթող
լաշքար .

Ցարմանն ի յայն տեղիքն խիտտ ամուր կար .
Ծընծայր իւր ընկերօքն եւ գոհութիւն տայր :

Անմահ թաղաւորին փառք տայր անդադար ,
Որ անբռնակ տեղիքն իւրեանց կայր զաղար .
Սիրով եւ մուրառով ի հոն նա կենայր .
Մանկանցն ի գուրս չերթալ նորա հրաման տար ,

Թէ՛ « Իմ սիրո՛ւն մանուկ գովա՛ծ Փայտիստ ,
Հանգիւր 'ւ ուրախ կեցիր եւ ա՛ռ քեզ զաղար ,
Զըկայ ինչ մեզ պակաս , զամէ՛նն ունինք սար .
Ես քեզ եմ շնորհակալ ոտիցդ ճարտար :

Մանուկն էր մասխարա , ուրախարար ,
Մանկանցն ձայն ածէր ցընծալ անդադար ,
Երգէր քաղցըր ձայնով զինչ սպրիւնում կար ,
Քարանցն այլ ձայն ածէր , լերիքն ձայն տար :

Սկիզբն առնէ Ցարման մանուկն , վասն
դարիպութեան , եւ ասե՛ր շայով այսպէս :

Ցարմանն իւր ընկերօքն օր մի նըստած կայր ,
Ուրախ եւ ի մուրառ անոյշ զըրուց տար .
Եղեւ յանկարծակի արտասուէր եւ (fol. 72)այր ,
Թէ՛՝ Յիշեց զճնոգքս իմ գոյար եւ ըզմայր :

Ի սըրտէն մորմոգէր աղեօքն զաւար ,
Հառաչէր նա խիտտ ողորմ զօրն անդադար .
Ասէ թէ՛՝ Զինչ հոս կայ սար եւ ձոր եւ քար
Ոսկի դառնայ ինծի , զարբ՛ւյ եմ 'ւ օտար :

Ղարիպն որ թէ լինայ շատ քաղաքաց տէր ,
Որ իսկի մեծութիւն առ նա պակաս չէր ,
Յերակ սիրտն է ի վախ թէ՛՝ Ես եմ անտէր ,
Զունիմ աստ բարեկամ ոչ կատարեալ սէր :

Հողին խիտտ փափաքի եւ սիրտն ի կամ է .
Աղքատ չլիլ երկրին սըրտին յօծար է .
Փոխանակ ի շաքրին զահր կըլանէ ,
Շաքար իւր համարի , անուշ թըլվէ է :

Ղարիպն որ ի յօտար աշխարհ եկեալ է ,
Հողն զինք չընդունի եւ զապուլ չսնէ .
Թէ՛՝ գիտութեամբ խելօք քան Սողոմոն է ,
Մարդկաց յիմար թըլի , տըխմար անխել է :

Ղարիպն թէ լինի հարուստ եւ փարթամ ,
Յաշխարհի պիտոյիւք խիտտ լի եւ թամամ ,
Յերակ հոգօք մաշի շատ դուռայ 'ւ ի խամ ,
(fol. 72v)Զըգա՛յ մանն եւ տերէ իմ տեղն չեր-
թամ :

Եւ թէ յանկարծակի ցաւք իւր հասանի ,
Եւ կամ մահու նըլան առ ինք զըտանի ,
Ածէ զաչերն ողորմ ծածուկ եւ յայանի ,
Խընդրէ իւր հայր եւ մայր , եղբայր սիրելի :

Մարմին իւր որ հողուն ծընունդ է առեւ ,
Փափաք է եւ ծարաւ մայրն տեսանել ,
Եւ կամ թէ՛ մահ գերել ի հող է դարձել ,
Օտար ծընունդ օտար երկիր զընդանել :

Հոս կամ կարօտ ծարաւ եւ սիրտս է պակսել ,
Կարօտ եմ եւ փափաք հայր իմ տեսանել ,

(1) Ձեւ, Ժէ՛՝ զտեղին տեղիմ :

Անս եղև մեզ ժամ աստից ելանել ,
Որպէս կամօք խորհել եւ թըտպիր առնել :

Խորհուրդ արարին ելանել անձից եւ երթայ եւ
հանդիպել զօրացն Պարսից եւ պատերազմել ընդ
սխառնաւ . եւ Ֆարսանն ընկերօք յաղթեաց
զնոսս եւ զնացին խաղաղութեամբ :

Մանուկն Փայրփառ Ֆարսանին հարցաւ ,
Ասես դու թէ ինձի ճանապարհ հասաւ ,
Ամէն բանի պատճառ ի յիսնէ ելաւ ,
Հրամանաւրդ կատարեմ , եւ թըտպիր արաւ :

(fol.73)Անուռ զՖարսան ի յայն տեղացն ելանէ ,
Հաւար իւր ընկերօք այն ծառն բերէ ,
Ձուգէ այն ծառն տեղ եւ ի վեր հանէ ,
Որ մարդու չերեւին ոչ ով տեսեալ չէ :

Ձին իրք որ պոտեմար զամէնն բերէ ,
Ոսկի եւ թէ սըլեհ թէ կերակուր ,
Ձամէն իրք առ նորա բերէ եւ պահէ ,
Երթայ ի այլ տեղի ուր կամ եղել է :

Ի լեռան ի դաշտ ի մարդ ուր կար արօտ տեղ ,
Կայր շատ երամ ձիան 'ւ արծին աներկեղ ,
Ի լեռան ի մարդ ի մօտ երկիր կայ եւ գեղ ,
Երթայ թէլ եւ զիտէ եւ զըտանէ տեղ :

Գիշերն ի խառ էրմակն ինքըն մշտանէ ,
Գըսան ձիան նըման ի մէջէն հանէ ,
Գըլէ ածուռ երթայ որ մարդ տեսել չէ ,
Տանի զնոսս ի հոն զամէնն թամբէ :

Փոխեն ըզկերպր որ մարդ զիրենք չի ճանչնայ ,
Ձողջիկն այլ փոխեցին ի մանկան չիվայ ,
Բարձան զինչ կայր ոսկի մալ եւ խըզինայ ,
Գիշերն հեծան 'ւ երթին որ մարդ չիմանայ :

Յորեկն իջնուն(1) ի քար պահուտ կան ի քուն ,
(fol.73vo)Գիշերն երթան ճանապարհ խիստ գաղտ
'ւ իմաստուն :

Հասան եղբ աշխարհին որ ելն է ճանփուն ,
Դարպանտ է եւ կապան շատ հեծել ի քուն :

(1) Ձեռ. մէջ՝ իբնուն :

Ասեն թէ զիշերով անցնել ո՞վ կարէ ,
Կենանք յայնժամ կնկնք երբ լուսն ծագէ ,
Թէ հեծել գայ ի դէմ յուժով զմեզ բռնէ .
Նայ սուր կայ ի մեր մէջքս եւ պատերազմ է :

Հեծելն այն ի կապնէն ի զատ իջած կար ,
Երբ լուսն լուսացաւ նայ անցին ճարտար ,
Տեսան եւ հեծելին շուտ աղին դապար ,
Անցին մանկտիք ընդ այս փուռ սըլեհով սար :

Հեծաւ ի հետ նոցա հեծել չորս հազար ,
Ամէնն պահառուր քաջ եւ կրովբար .
Հասան նոցա շուտով նայ առին դազար ,
Դարձան մեծ մանկութեամբ ի հեծելն ի հար :

Ֆարսան մանուկն էառ զաղջիկն եւ երթայր ,
Եւ հինգ ընկերքըն իւր դէմ հեծելին կար ,
Տըվին շատ պատերազմըն քաջ եւ ճարտար .
Անկան շատ ի զօրացն եւ առին գուժար :

(fol.74) Գընալ խաղաղութեամբ նոցա հրաման
տան ,
Բայց անուանէ ո՞վ է զիրենքն որ հարցաւ ,
Պատասխանի տրվին՝ Մանուկն է Ֆարսան , ✓
Որ ընկերօքն երեկ այլվա կու գրնան :

Նլինն ի աշխարհէն ճանապարհ երկար ,
Մօտին իւրեանց աշխարհ որ կարօտել կար ,
Խընդայր ուրախութեամբ եւ գոհութիւն տար
Անմահ թագաւորին իւրենքն համար :

Մտանէ Ֆարսան մանկանն յաշխարհն իւր եւ
տեսանել զծնողսն իւր եւ ուրախանայ եւ ցու-
ցանէ զկին իւր որ հետ իւր եւ հայրն գոհու-
թիւն եւ փառս եւ աննկատարողին Աստուծոյ
Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն , ամեն :

Ճարտար գար ի քաղսըն ուր թագաւորն էր ,
Մանուկն Փայրփառ երթար յաւեաէր ,
Թէ՛ Որդին քո հասաւ , նըտեղ եւ ընդէ՛ր ,
Խախտի՛ չառ անգին՝ խիստ պատուական էր :

Հրաման ետ հեծելին ամէնն հեծնուլ ,
Եւ ինքն իւր խառ ահօք ճանապարհ ելուլ ,
Փութար եւ բշտապէր իւր որդին տոնուլ ,
Ձի էր կարօտ 'ւ աղեց աղէտին անդայր :

(fol. 74vo) Տեսնու յանկարծակի զմանուկն Ծարւման ,
 Հաւասար իւր ընկերօքն որ զան միաբան ,
 Գահեց ի դէմ վազեց զըթով հայրական ,
 Էած զերկ համարուից զմանուկն Ծարման :

Երևտ խալիթթ բազում ըզգեստըս պայծառ ,
 Հագուց ինք զիր որդին ընկերօք հաւասար ,
 Զգիտաց թէ աղջիկ էր այն որ հետ իր կար ,
 Զի կերպըն փոխել էր ինք ճանփուն համար :

Դարձան մեծ խնդուութեամբ ի քաղաքն եկին ,
 Ասաց շատի առնել զօրն այն քաղաքին ,
 Վասն իւր Ծարման մանկան որ բարով եկին .
 Եւ վասն այնորիկ հասաւ ինք իւր մուրասին :

Պատմէ զինչ որ եղել էր Խորասանին ,
 Եւ ըզգուսար արքային ցուցնէ ի յայտին ,
 Թէ որպէս զնա էառ իւրա որ մարդ չի տեսին ,
 Հանց ով որ զայն տեսել յոյժ(1) զարմանային :

Հարսնիք արուր արքայն վասն Ծարմանին ,
 Եւ կին էառ ըզնա վասն իւր զաւակին .
 Հասաւ ինք իւր մուրատ 'ւ ի սէրն արութին .
 Կենար զօրն ի խնդում եւ ուրախութիւն :

(fol. 75) Երթան հետ հեծելին ի խաղ 'ւ ի սայրան .
 Խաղար զուտ եւ ճովան մըտնու ի մօտան .
 Ծընծան ծընողքն զօրն որ զորդին տեսան ,
 Աստուծոյ շատ գոհութիւն նոքայ եւ փառք տան :

Մեռանել հօրն եւ Ծարմանն նստի քաղաւոր
 փոխանակ հօրն , եւ ծայ շատ պատեալով ընդ
 Պարսիկս :

Երեք տարի կեցաւ հայրն կենդանի .
 Մահու հրաւէրն զայ վախճանն հասնի .
 Նըստիլ յաթոն հօրն ժառանգէ որդի .
 Լինի մեծ թագաւոր գիտուն եւ բարի :

Լըսէ զայն թագաւորն Խորասանայ ,
 Թէ՛ Գոյ զուստրն եւ Ծարման Ասորեստան կայ .
 Առնու առթիւ հեծել 'ւ ի նա ի հար զայ ,
 Զկարեն իր հեծելին զէմ կենալ նոքայ :

(1) Զեռ, մէշ՝ յուծ :

Ի դէմ գայ շատ զօրօք Ծարմանն եւ յաղթէ ,
 Զամէնն զկայ ի յետ ի փախուստ առնէ .
 Կոտրէ շատ ի զօրայն եւ յերկիր ձրդէ .
 Իսկ թագաւորն շուտ յայխարըն հասնէ :

Դարձան բազում անգամ այլվա ի հար գին(1) ,
 Եւ ինչ որ իւր զօրացն առնել կարէին .
 Մինչեւ վախճանն հասաւ (fol. 75vo) այն թագաւորին ,
 Ապա հետա հանգիստ եւ խաղաղութիւն :

Վասն ծնանիլ որոյ իւրոյ եւ յե՛ս քաղուլ ժաւանակի վախճան իւր հասնի . եւ նստի որդին յաթոն հօր իւրոյ եւ ժառանգէ՝ զքաղաւորութիւն քաղուլ անս :

Եղեւ երկամսամեայ մեծ թագաւորն այն .
 Լինի իւրենն որդի ի յինքն ի նըման ,
 Գեղեցիկ սուրբով փառօք զանազան ,
 Իսկ նա ուրախացաւ ի ծնունդն մանկան :

Անուն զըրին նըմա եւ Շահիշիբան ,
 Սընունդ էառ եւ վարժեցաւ մանուկն այն ,
 Ուսաւ շատ զըպրութիւն եւ բան գիտութեան ,
 Եղեւ երկոտասանամայ մանուկն այն :

Հեծնու ի ձի հագնի զէն զինուորութեան ,
 Խաղայ հետ ընկերաց մըտնու ի մօտան .
 Ուսնի զամէն արուեստ պատերազմական ,
 Մինչ լինի մանկութեամբ իւր հօրն ի նըման :

Թագաւորն Ծարման վաթսուս ամ ապրի ,
 Ուրախ եւ ի մուրատ ոչ ումէ չյաղթի ,
 Լուր գայ մահն եւ տիրէ ի յանկարծակի ,
 Նըստի որդի նորա յաթոն հայրենի :

(fol. 76) Քեզ փառս վերառաքեմ, տէր Հայրըդ վերին ,
 Գովեմ զՈրդիդ՝ աննդ եւ ըզմիածին ,
 Բարեբանեմ զԱստուած ճշմարիտ Հոգին ,
 Եւ քեզ փա՛ռք յաւիտեանըս յաւիտենին :



(1) Այսինքն՝ գային :